Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ռ. ՊՅԱՏՆԻՑԿԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՀՇԱՐԺՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ՀԱՄԽ

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԳԱՍՏՐՈԼՈԳԻԱՅԻ ՈԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ո. ՊՅԱՏՆԻՑԿԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՅՇԱՐԺՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, — ԵՐԵՎԱՆ. 1930

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հր. № 1467։ Գրառեպվար № 6053 (բ)։ Տիրաժ 3000

Գետհրատի առաջին տպարան Վաղարշապատում։
Պատվեր № 171

I. ՉԻՆԱԿԱՆ ԱՐՀՇԱՐԺՄԱՆ ՀԻՎԱՆԴԱԳԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոմունիստների աշխատանքը գոմինդանյան արհմիություններում

Հեղափոխական արհշարժման ամենահիվանդագին խնդիրներից մեկը Չինաստանում կոմունիստների աշխատանքն է գոմինդանյան և դեղին («ձախ»-գոմինդանական) արհմիություններում։ Չինաստանում՝ անտարակույս, բանվորական շարժման մի նոր վերելք է հասունանում, վորը պահանջում է չինական կոմունիստական կուսակցությունից պարզ և վորոշ դնել աշխատանքի խնդիրը պրոլետարական այն մասսայական կազմակերպություններում, վորոնք՝ այսպես թե այնպես, առնչություն ունեն տարերայնորեն ծագող գործադուլային շարժման հետ և վորոնք գոմինդանյան և դեղին առաջնորդների ղեկավարության տակն են գտնվում։ Կարմիր արհմիություններն անլեգալ կերպով գոյություն ունեն, գոմինդանյան տերորի ծանր ճնշման տակն են գտնվում և վոչ միշտ ու ամենուրեք կարողանում

են իրենց ձեռքն առնել տնտեսական կոնֆլիկտների ղեկավարությունը։ Մինչդեռ, Չինաստանի մի շարք արդյունաբերական շրջաններում այժմ գոյություն ունեն գոմինդանյան և դեղին արհմությունների կազմակերպություններ, վորոնք գործադուլային պայքարների ժամանակ ճգնում են իրենց ձեռքն առնել շարժման ղեկավարությունը, վորպեսզի գլխատեն նրան։

Չինաստանի ԿԿԿ հունիսյան պլենումը հաստատում է կուսակցության խզումը բանվորական լայն մասսաներից

Չինական կոմկուսակցության ԿԿ պլենումը 1929 թվականի հունիսին ստիպված եր խոստովանել, թե չնայելով վոր արհմիութենական աշխատանքի մեթոդների և արհմիութենական մասսաներին տակտիկական մոտեցումն ունենալու վերաբերմամբ վորոշ նվաճումներ կան, այնուամենայնիվ դեռ ձեռք չեն բերված այն աջողությունները, վոր ինկատի ուներ չինկոմկուսակցությունը ՀԿԿ VI համագումարում 1928 թվականին, շատ թերություններ ել կան առաջվա նման, դեռ շարունակվում են հրամանատարության մեթոդները, դեռ չեն հասկանում կարմիր արհմիության և կուսակցական կազմակերպության տարբերու-

թյունը, դեռ բավարար չափով ուշադրություն չի դարձվում բանվորների անմիջական պահանջներին և համեմատաբար քիչ բան է արված բանվորներին բացատրելու, թե ընդհանրապես վորքան հսկայական նշանակություն ունեն գործարանային կոմիտեները դասակարգային պայքարի համար. բավարար ուշադրություն չի դարձված աշխատանքի լեգալ և անլեգալ ձևերի զարգացման վրա. բավարար չափով չի գիտակցվում, թե անհրաժեշտ է կոմֆրակցիաներ ստեղծել պրոլետարական մասսայական կազմակերպություններում, վորոշ խառնաշփոթություն կա այն հարցի վերաբերությամբ, թե աշխատանքի ինչպիսի ընդհանուր գիծ պետք է տանել դեղին արհմիությունների ներսում. *բավարար չափով ուշադրություն չի նվիրվում անկազմակերպներին կազմակերպելու խնդրին և այլն։* «Այս բոլոր թերությունները վկայում են, թե կուսակցությունն՝ ընդհանրապես, չի կարողացել կամուրջ գցել այն տարածության վրա, վորը բաժանում է կուսակցությանը մասսաներից»։ *Այսպես է ասում ինքը՝ չինկոմկուսակցության ԿԿ վորոշումը։*

Բանվոր դասակարգի դրության վատացումը

Այնինչ հետզհետե ավելի ցայտուն կերպով է հրապարակ գալիս բանվոր մասսաների դժգոհու-

թյունը։ Գոմինդանն ու իմպերիալիստները միասնական ջանքերով աշխատում են խորացնել բանվոր դասակարգի շահագործումը։ Հեղափոխական պայքարի ժամանակ ձեռք բերված բոլոր նվաճումներն այժմ փոխված են։

Զիսոսելով աշխատավարձի անմիջական իջեցման մասին, մասսաների կենսական մակարդակն իջավ նաև առաջնակարգ անհրաժեշտության առարկաների գների բարձրացման, պղնձե դրամների արժեքների անբարենպաստ փոփոխության հետևանքով և կապալառուների ու վերակացուների շանտաժի պատճառով, վորոնք մեծ մասով գոմինդանի և իմպերիալիստների ագենտներն են հանդիսանում։ Ռացիոնալացման պրոցեսն ըստ եյության նույնն է Զինաստանում, ինչ վոր մյուս յերկրներում, այստեղ ավելի քայքայիչ ազդեցություն գործելով բանվոր դասակարգի դրության վրա։ Բանվորական որը միջին հաշվով տատանվում է 10 և 12 ժամերի միջև։ Տղամարդկանց աշխատանքը հետզհետե ավելի յե դուրս մղվում կանանց և յերիտասարդության աշխատանքով, մեքենաների թիվը՝ վորոնց բանվորը պետք է սպասարկի, մեծանում է, գործարանային կանոնները տառացիորեն հակամարդկային են, առաջվա նման գործադրվում է ծեծը, իսկ գործազրկությունը չափազանց մեծ է։

Գործադուլային պայքարի վերելքը

Հետևանքն այն է, որ աճում է բանվորական մասսաների դժգոհությունը։ Տնտեսական գործադուլների թիվը չափազանց մեծ է, ընդսմին՝ նրանցից շատերը տարերայնորեն են առաջ գալիս։ Շանհայում 1928 թվականի առաջին 9 ամսում, ըստ այն վիճակագրական տվյալների, որ հրատարակել է գոմինդանի սոցիալ-հետաքննիչ բյուրոն, 175 գործադուլ է տեղի ունեցել, ընդգրկելով 6,340 ձեռնարկություն և 233,431 բանվորներ։ Գործադուլներում մասնակցել են 71,369 կին և 12,389 յերեխա։ Գործադուլների մեծ մասը տեղի յե ունեցել չինական ձեռնարկություններում, բայց այդ գործադուլներից միայն 38 են, վորոնցից ամեն մեկը 100 բանվորից պակաս մարդ է ընդգրկել։ Մասսաների ակտիվության մասին կարելի յե դատել այն փաստի հիման վրա, որ 37 գործադուլ բողոք է յեղել ճնշումների դեմ, 11-ը՝ վատ վերաբերմունքի դեմ, 18-ը աշխատավարձի հավելումն է պահանջել և միայն յերկու դեպքում գործադուլավորները բանվորական ժամերի կրճատումն են պահանջել։

Գործադուլների նոր շերտում չափազանց կարևոր է հանդիսանում այն հանգամանքը, որ տնտեսական կոնֆլիկտները տեղի յեն ունենում

վոչ միայն ռուսերկրյա կոնցեսիաներում, այլ նույնիսկ գլխավորապես չինական ձեռնարկություններում։

Գոմինդանի տվյալներով՝ 1929 թվականի հունվարին, բացի 12 գործադուլից, 65 կոնֆլիկտ և ծագել 1,051 ձեռնարկության մեջ, 20,049 բանվորի մասնակցությամբ։ Այս տարվա մայիսին մի ամբողջ շարք գործադուլներ են տեղի ունեցել Շանհայում։ Գործադուլ են արել նավահանգստի բանվորները, յերկաթուղայինները, պատրաստի հագուստեղենի խանութները և այլն։ Հունիսին գործադուլ արին Տյանցզինի տրամվայի բանվորները։ Գործադուլ արած տրամվայիններին միացան ելեքտրակայանների բանվորները, վորոնք տաս պահանջ դրին, վորոնց թվում կային՝ 8 ժամյա բանվորական որ, արձակված բանվորների վերընդունելություն, կրկնակի աշխատավարձ տոնական որերի համար, ռուսերկրյա և ռուս սպիտակգվարդիական վերակացուների արձակում։

Գործադուլավորները գերեցին շտրեկբրեյխերների յերեխաներին, խլեցին 1 միլիոն կոպեկ (պղնձե դրամ), ծեծեցին բելգիական ինժեներներին, վորոնք փորձ եյին անում աշխատանքը կազմակերպել շտրեկբրեյխերներով։

Ո՞վ եր ղեկավարում գործադուլային պայքարը

Ո՞վ եր ղեկավարում գործադուլները։ Ինչպես վերևում ասացինք, գործադուլների մեծ մասը տարերայնորեն եր սկսվում։ Վոչ կոմկուսակցությունը, վոչ կարմիր արհմիությունները չկարողացան իրենց ձեռքն առնել տնտեսական կռիվների ղեկավարությունը։ Շատ դեպքերում այդ ղեկավարությունը ձեռք եյին գցում գոմինդանյան արհմիությունները։ Դրանից ավելի, 1928—1929 թվականի գործադուլներից շատերը վերջանում եյին գոմինդանյան իրավարարության միջոցով։ Այսպես՝ որինակ, Ջարդայն Մեյստոն շոգենավային կամպանիայի շոգենավերից մեկի վրա վերջերս տեղի ունեցած գործադուլի ժամանակ կոնֆլիկտին միջամտեցին դեղին արհմիության ղեկավարները, վորոնք փոխադարձ զիջումներով վերջացրին գործը։

Զնայելով գոմինդանյան իշխանությունների կատաղի տերորին՝ Չինաստանում բանվորական յեվ հեղափոխական շարժման վերելք ե նկատվում

Այսպիսով առկա յե բանվորական շարժման ընդհանուր վերելքը Չինաստանի թե հյուսիսում և թե հարավում։ Մասսաների մեջ աշխատանք

տանելու մեծ հնարավորություններ կան։ Այդ մասին վկայում են թե մայիսյան դեպքերը և թե ոգոստոսի 1-ի, մայիսի 30-ի հակապատերազմական ցույցերը 1925 թվականին գնդակահարված ցուցարարների տարեդարձին, չնայելով վոր գոմինդանը արգելել եր գործադուլները, միտինգները և ցույցերը, և՝ չնայելով այն բոլոր նախազգուշական միջոցներին, վոր ձեռք եյին առել չինական և անգլիական վոստիկանությունները, չինական կոմկուսակցության ղեկավարությամբ գործադուլ արին փոստը, նավահանգստային բանվորները, մանածագործական շատ ֆաբրիկաներ, գործակատարներ և այլն։ Շանհայի գլխավոր փողոցներում մի քանի ժամ տևողությամբ տասնյակ հազարավոր բանվորների և ուսանողների ցույցեր եյին տեղի ունենում։ Ցուցարարները վոչնչացրին գոմինդանական յերկու լրագիր, ջարդում եյին տրամվայների և ոտարերկրացիների ավտոմոբիլների ապակիները։ Այդ ցույցերն ու գործադուլներն աջողություն ունեցան այն պատճառով, վորովհետև լավ եյին կազմակերպված։

Կոմունիստական կուսակցությունը հակաիմպերիալիստական կամպանիայի համար ոգտագործեց մի չինացու սպանությունը, վորին անգլիական մի զինվոր եր սպանել։ Հատուկ հնկուսակցական կոմիտե կազմվեց սպանվածի ընտանիքին ոգնե-

յու. համար։ Այդ կոմիտեն՝ վոր Չինաստանի կոմ-կուսակցության դիրեկտիվներով եր գործում, չնայելով գոմինդանի արգելքին, 60 արհմիութե-նական և ուսանողական միությունների պատ-գամավորական ժողով գումարեց փոստում, վորը վորոշում հանեց մայիսի 30-ին գործադուլ անել և ցույցեր կազմակերպել։ Գոմինդանին միացած փոստ-հեռագրական ծառայողների միությունը մայիսի 30-ից հետո արձակվեց և վերակազմվեց։ Փակվեցին այն համալսարանները, վորոնց ուսա-նողները մասնակցում եյին մայիսի 30-ի ցույ-ցերին։

Սակայն՝ մյուս կողմից, պետք է առանձնապես ընդգծել, վոր մասսաների գործունեության ու-ժեղացման տենդենցներին զուգընթաց վերջին տարում աճում եր նաև գոմինդանյան և դեղին արհմիությունների ազդեցությունը։ Այդ ազ-դեցության աղբյուրն՝ իհարկե, այն է միայն, վոր ներկա պայմաններում կարմիր արհմիություն-ները Չինաստանում հրապարակով գոյություն ունենալու հնարավորություն չունեն։ Սակայն այդ ազդեցությունը կա և նրա գոյությունը ժխտելը չափազանց վնասակար կլիներ։ Արհմիու-թյունների Ամաղովկիանոսյան Քարտուղարու-թյան Պրոֆինտերնին 1929 թ. մայիսին տված հաշվետվությունից յերևում է, վոր գոմինդան-

յան և դեղին արհմիութիւնների այդ ազդեցութիւնն ավելի զորեղ է Հյուսիսային Չինաստանում։

Գոմինդանյան կեղծ-արհմիութիւնները մասսայական կազմակերպութիւնների յեն վերածվում յեվ թափանցում են ամբողջ արդյունաբերության մեջ

Ճիշտ է, վոր կարմիր արհմիութիւնների դրութիւնը՝ բանվորական մասսաների ակտիվացմանը զուգընթաց, բարելավվում է։ Սակայն պետք է հաշվի առնել այն փաստը, վոր տասնյակ հազարավոր բանվորներ գոմինդանյան և դեղին արհմիութիւնների մեջն են գտնվում և անհրաժեշտ է սրանից համապատասխան տակտիկական յեզրակացութիւններ հանել։ Մանավանդ վոր քիչ չեն այն կարմիր արհմիութիւնները, վորոնք միայն ձևականորեն, թղթի վրա գոյութիւն ունեն։ Շանհայում 500 հազար արդյունաբերական բանվորներ են հաշվվում։ Չինկոմկուսակցության քաղբյուրոյի տվյալներով՝ Շանհայում բոլոր կազմակերպված բանվորների, թե կարմիր և թե դեղին ու գոմինդանյան արհմիութիւնների բանվորների թիվը 50 հազարի յե հասնում։ Ցեղած տեղեկութիւններով՝ կարմիր արհմիութիւնների

անդամների (որոնք անդամակցական վճար են մուծում) թիվը Շանհայում 5 հազարի չէ հասնում (ամբողջ Չինաստանում՝ մոտավորապես 10 հազարի)։ Դեղին արհմիություններ գոյություն ունեն փոստային ծառայողների մեջ, հրատարակչական գործում, ծխախոտի արդյունաբերության մեջ, ֆրանսիական տրամվայի վրա և այլն։ Նրանք գոյություն ունեն նաև յերկաթուղիների վրա. մետաքսի և մանածագործական արդյունաբերության մեջ, ինչպես և նավաշինարանների բանվորների մեջ դեղին արհմիությունները դեռ չեն կարողացել ամրանալ։ Չինկոմկուսակցության կկ հունիսյան պլենումի բանաձևը հաղորդում է, թե բացի Շանհայից, կեղծարհմիությունները, որոնց ղեկավարում են գոմինդանը և՝ այսպես կոչվող, վերակազմյալների խումբը («ձախ գոմինդանականներ», Վան Տին-վեյ) ներկայումս իրենց գործունեությունը տարածում են նաև յերկաթուղային ուրիշ կենտրոնների, նավաշինարարների, լեռնային ների վրա և այլն։ Այդ աշխատանքը տարվում է գոմինդանի տեղական իշխանությունների ոգնությամբ։ Բնորոշ է այն, որ մի շարք դեպքերում նույնիսկ իմպերիալիստները թույլ են տալիս իրենց բանվորներին դեղին արհմիությունները մտնել։ Թե չինական և թե ոտարերկրյա ձեռնարկատերերը՝ այսպիսով, գոմինդան-

յան և դեղին արհմիութիւնների վրա նայում են վորպես բանվորներին խաբելու և հեղափոխական շարժման աճումը հետ կասեցնելու մի գործիքի վրա։

Կարմիր արհմիութիւնների գործունեության աշխուժացմանը յեվ ծավալմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է աշխատել գոմինդանյան արհմիութիւններում՝ նրա անդամներին գրավելու դասակարգային պայքարի համար

Այստեղից հետևում է, թե չինկոմկուսակցությունն անհրաժեշտ պետք է համարի՝ կարմիր արհմիութիւնների գործունեության աշխուժացմանը զուգընթաց, վճռական բեկումն առաջ բերել դեղին և գոմինդանյան արհմիութիւնների աշխատանքի ներսում։ Իհարկե, կարմիր արհմիութիւնների քաղաքական-տեսակարար կշիռը շատ ավելի մեծ է, քան այն 10 հազար անդամներինը, վորոնք կազմակերպչորեն նրանց շարքերումն են հաշվվում։ Չպետք է աչքաթող անել ռեֆորմիստական տրադիցիաների բացակայությունը Չինաստանում, թեև ռեֆորմիզմը շատ խոշոր ջանք է թափում թափանցելու չինական բանվորական շարժման մեջը, ինչպես նաև ամուր, սերտ միացած ռեֆորմիստական արհմիութենական ստորին ապարատի բացակայությունը։

Կոմկուսակցությունը պետք է վճռական պայքար մղի կարմիր արհմիությունների վերաբերությամբ յերևան յեկող բոլոր լիկվիդատորական տենդենցների դեմ իր շարքերում, վորովհետև այդպիսի տենդենցները աջ վտանգի և ամենագուտ ոպորտունիզմի արտահայտություններ են։ Այդ կողմից չինկոմկուսակցության ԿԿ հունիսյան պլենումի վորոշումը քաղաքական ճիշտ վերլուծություն է տալիս, թե կարմիր արհմիությունները հեղափոխական արհշարժման հիմքն են հանդիսանում և պետք է տարածվեն ամենուրեք, վորտեղ նրանք դրա համար ոբյեկտիվորեն բարենպաստ հող ունեն։ Առաջին հերթին պետք է նկատի ունենալ յերկաթուղայինների, լեռնային բանվորների և ծովայինների միությունները, վորոնք Աշխատանքի Համաչինական Ֆեդերացիայի վողնաշարն եյին կազմում, իսկ այժմ՝ ըստ վկայության չինական ընկերների, ավելի անվանական գոյություն ունեն։

Սակայն չինկոմկուսակցության ԿԿ վոչ պակաս վճռականությամբ պետք է ցույց տա, թե վտանգավոր է թերագնահատել մեր դրության ուժեղացման նշանակությունը դեղին և գոմինդանական արհմիությունների մեջ և պետք է խնդիր դարձնի, թե անհրաժեշտ է յեռանդուն կերպով աշխատել նրանց մեջ։ Դրա համար անհրաժեշտ է

ներկուսակցական կամպանիա տանել, բացատրելով, թե անհրաժեշտ է, որ կուսակցության անդամները և հեղափոխական բանվորները դեղին և գոմինդանյան մասսայական արհմիությունները մտնեն։ Մատնանշված առանձնահատկությունների շնորհիվ (ռեֆորմիստական տրադիցիաների և ստորին ապարատի բացակայություն) Չինաստանի գործադուլային ալիքի ներկա վերելքում դեղին և գոմինդանյան միությունների մեջ մասսաներին գրավելն ավելի հեշտ կարող է լինել, քան հին կապիտալիստական յերկրների ռեֆորմիստական արհմիություններում։

Կոմունիստները գոմինդանյան արհմիություններում պետք է կոմֆրակցիաներ կազմեն իրենցից

Դեղին և գոմինդանյան արհմիություններում կոմունիստները պետք է ֆրակցիաներ կազմեն, վորպեսզի իրենց շուրջը համախմբեն միության բոլոր հեղափոխական տարրերին։ Այնտեղ, վորտեղ գոմինդանյան կամ դեղին մասսայական միություններին կից ոբյեկտիվ-բարենպաստ պարագաներ կան հեղափոխական արհմիություններ ստեղծելու համար, անհրաժեշտ է միաժամանակ յերկու ուղղությամբ աշխատանք տանել։ Կոմունիստները պետք է հեղափոխական արհմիություն-

ներ ստեղծեն և աշխատեն գոմինդանյան ուղղություն ունեցող արհեստակցական մասսայական միություններում, վորպեսզի այդ միությունների անդամներին դուրս կորզեն գեներալական-գոմինդանական կառավարության ազդեցության տակից։ Ընդհանրապես հարցն այն բանի մասին չե, թե չինական կոմունիստական կուսակցությունը հանձն առնի բանվորական լայն մասաներին ագիտացիա անելու ֆունկցիան, վորպեսզի նրանք դեղին կամ գոմինդանյան արհմիություններ մտնեն։ Չպետք ե մոռանալ, վոր մենք այդ արհմիություններին ենք գնում միայն այն նպատակով և այնքան, վորքան նրանցում նշանակալից չափով բանվորական մասսա կա և միայն նրա համար, վորպեսզի բանվորական այդ մասսային գրավենք, ոգտագործելով պրոլետարական շարժման ներկա վերելքը։

Պետք է պայքար մղել աջ լիկվիդատորների դեմ, վորոնք առաջարկում են լուծել կարմիր արհմիությունները

Չինաստանի կոմունիստական կուսակցությունը պետք ե վճռական պայքար մղի կուսակցության նեսում գոյություն ունեցող այն լիկվիդատորների դեմ, վորոնք առաջարկում են լուծել բոլոր կարմիր արհմիությունները, անկախ այն բանից,

ՀՄՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

թե նրանք մասսայակա՞ն են արդյոք, կարո՞ղ են մասսայական դառնալ, ազդեցություն ունեն նրանք ակուսակցական բանվորների լայն խավերի վրա կամ թե նրանք այդ ազդեցությունը դեռ կարող են ձեռք բերել ակտիվ միջամտությամբ պրոլետարիատի տնտեսական աճող պայքարին։ Սրա հետ միասին, չինական կոմկուսակցության ԿԿ և կարմիր արհմիությունների ղեկավարները պետք է աչքի անցնեն կարմիր արհմիութենական կազմակերպությունների ցուցակը և անվախորեն լուծեն այն արհմիությունները, որոնք միայն թղթի վրա գոյություն ունեն և աշխուժացման հակամետ չեն, որպեսզի կարելի լինի այդ արհմիութենական միությունների ակտիվ ելեմենտներին ոգտագործել ձեռնարկություններում և գոմինդանյան մասսայական միություններում աշխատանք տանելու համար։

Գոմինդանյան մասսայական արհմիություններում աշխատանք տանելու խնդրի մասին չինական ընկերների մեջ խառնաշփոթություն կա

Այդ խնդրում որպես խառնաշփոթության և գոմինդանյան ու դեղին արհմիություններում կոմունիստների աշխատանքի ամենակարևոր խնդրին ոչ ճիշտ մոտեցման իբրև բնորոշ օրինակ՝ կարելի է մատնանշել Պրոֆինտերնի կարմիր արհմիությունը

ների ներկայացուցչի՝ ընկեր Դենգի ելույթը կիրակի X պլենումում։ «Եթե Չինաստանի կարմիր արհմիությունները,— հայտարարեց ընկ. Դենգը,—չեն կարողանում առաջադիմել, օբյեկտիվ տեսակետից այդ բանը բացատրվում է նրանով, որ սպիտակ տերորը չափազանց կատաղի է»...։ Եվ նույն տեղում ընկ. Դենգն ավելացնում է. «ինկատի ունենալով կատաղի սպիտակ տերորը, բանվոր դասակարգի նույնիսկ ակտիվ տարրերը վախենում են կոմկուսակցության մեջը մտնելուց, սակայն նրանք հաճույքով են գնում կարմիր արհմիությունները։ Ուստի, ինչ էլ որ լինի, մենք պետք է անլեգալ կարմիր կազմակերպություններ ստեղծենք գեղին արհմիությունների ներսում և գեղին արհմիությունների անդամների լայն մասսաներին հեղափոխական ոպոզիցիայի վերածենք...»։ Այդ նշանակում է, թե գեղին և գոմինդանյան լեգալ միությունների ներսում պետք է անլեգալ կարմիր միություններ կազմակերպել, որոնք գեղին արհմիութենական միությունների մեջը մտած լայն մասսաներին հեղափոխական ոպոզիցիա դարձնեն։

Եթե այդպիսի խառնաշփոթության մեջ է չինական կարմիր արհմիությունների ներկայացուցիչը Պրոֆինտերնում, ուրեմն կարելի է երևակայել, թե տեղերում ինչ է կատարվում։ Ուս-

տի և անհրաժեշտ է պարզ և վորոշ կերպով դնել հարցը, թե ինչպես պետք է աշխատեն չինական կոմունիստները գոմինդանյան և դեղին արհմիութիւնների մեջ։ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը կարող է և պետք է պայքար մղի գոմինդանի դեմ գոմինդանյան արհմիութիւնների մասսաների վրա ազդեցություն ձեռք բերելու համար։

Կարևոր արհմիությունների ընդհատակյա գործունեության ղեկավարությունը թողնելիս պետք է ակներև կարգով՝ թեկուզ ուրիշ անվան տակ, աշխատեն դուրս գալ ընդհատակյա գործունեությունից

Բանվորական շարժման նոր վերելքի առընչությամբ՝ անհրաժեշտ է Չինաստանի կոմունիստական կուսակցության ԿԿ առաջ հարց բարձրացնել, թե նպատակահարմար է վոր կարմիր արհմիությունները ընդհատակյայից դուրս գան— թեկուզ ուրիշ անվան տակ, ակներև կարգով։ Այդ դեպքում անհրաժեշտ կլինի, իհարկե, գաղտնի պահել այդ արհմիությունների փաստական ղեկավարությունը։ Մինչև այժմ հարցն այնպես եր դրված, թե կարմիր արհմիությունները չեյին կարող մասսայական դառնալ, վորովհետև ռեպրեսիաները չափազանց ուժեղ եյին։ Մինչ-

նույն ժամանակ արհշարժման կոմունիստները և հեղափոխական տարրերը չելին աշխատում դեղին և գոմինդանական արհմիություններում, որոնց մեջ նշանակալից չափով պրոլետարական մասսա կա։ Ցեվ Կոմինտերնը վոչ միայն իրավունք ունի, այլև պարտականություն չինական կոմկուսակցության առաջ խնդիր դնել մի կողմից՝ թե նպատակահարմար չե պահել այն կարմիր արհմիությունները, որոնք մեկուսացած են մասսաներից և որոնք միայն անունով գոյություն ունեն, իսկ՝ մյուս կողմից, թե անհրաժեշտ ե անհապաղ յեռանդուն աշխատանք սկսել մասսաների մեջ դեղին և գոմինդանական արհմիությունները գրավելու համար։

Անհրաժեշտ ե ֆաբգործարկոմներ ստեղծել

Այդ յեռանդուն աշխատանքը մասսաների մեջ պահանջում ե Չինաստանի կոմունիստական կուսակցությունից ամրանալ ֆաբրիկաներում և գործարաններում՝ ֆաբգործ-կուսբջիջներ և ֆաբ-գործարանային կոմիտեներ ստեղծելու միջոցով։ Ֆաբ-գործարանային կոմիտեների նշանակությունն ել ավելի մեծ ե նրանով մանավանդ, որ վոչ դեղին, վոչ ել գոմինդանական արհմիությունները կենտրոնացած չեն և վոչ ել միու-

թյուններ են կազմում թե ազգայնական, թե արտադրական, թե նույնիսկ դավառական կամ քաղաքային մասշտաբով։ Գործարկումները մասսաների հետ սերտ կոնտակտ պահելու միջոց են հանդիսանում, ինչ վոր այժմ չինական կոմկուսակցության համար առանձնապես կարևոր է և լավագույն պաշտպանությունն են հանդիսանում չինովնիկների, գոմինդանի և դեղին արհմիությունների դեմ։

Ֆաբգործարկումներին պետք է ընտրեն բոլոր բանվորները, թեկուզ բացահայտ կարգով։ Գործարանային կուսբջիջները պարտավոր են իսկույն սկսել կատարել այդ ամենակարևոր, հարվածային խնդիրը։ Կուսակցական բջիջների ղեկավարությամբ ֆաբգործարկումները կարող են ձեռնարկություններում մասսաների ղեկավարները դառնալ քաղաքական կամպանիաներ տանելիս և տնտեսական պայքար մղելիս։ Նրանք կկարողանան նաև պատնեշ դառնալ բանվորական մասսաների և դեղին ու գոմինդանյան միությունների միջև՝ ձեռնարկության մեջ։ Ֆաբգործարկումների յեռանդուն գործունեությունը կոգնի նաև ձեռնարկություններում աշխատող դեղին և գոմինդանյան արհմիութենական միությունների անդամներին փոխադրել մասսայական կարմիր արհմիությունները։

Միաժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ ֆաբգործարկումները կազմակերպելու խնդրին չպետք է մեխանիկորեն մոտենալ։ Միաժամանակ սրան զուգընթաց՝ պետք է անխնայորեն մերկացնել կուսակցական բջիջների անգործությունը ծածկելու ձգտումը ֆաբգործարկումների կազմակերպության գործում ֆաբգործարկում կազմակերպելու մեխանիկական անհնարինությունը չարաշահելով։

Ֆաբգործարկումները գործադուլների ժամանակ կարող են վերածվել գործադուլային կոսիտեների։ Ֆաբգործարկումները պետք է դառնան արտադրական տրհսիությունների սկզբնական բջիջները

Գործարանային կոմիտեն արհմիության սուրրոգատը չի հանդիսանում։ Նա հանդիսանում է ոժանդակ որգան և նրա առաջնակարգ խնդիրն այն է, որ Չինաստանի կոմունիստական կուսակցության և կարմիր արհմիությունների վորոշումները անցկացնի ձեռնարկությունների ներսում։ Իսկ այնտեղ, վորտեղ կարմիր արհմիություններ չկան և վորտեղ կոմկուսակցության անդամներին հաջողվում է գործարանային կոմիտե ստեղծել, վերջինս արմիութենական պաշտոնական անձերի աշխատանքը պետք է ստանձ-

նի։ Հենց վոր վորևե ձեռնարկության մեջ տնտեսական կոնֆլիկտ առաջ գա և բանվորները վորոշեն գործադուլ անել, գործարկոմը կարող է ժամանակավորապես ընդարձակվել և վերածվել գործադուլային կոմիտեյի։ Ցեմ ընդհակառակն, յեթե վորևե ձեռնարկության մեջ, վորտեղ գործարանային կոմիտե չկա, գործադուլի հետևանքով բանվորական մասսան գործադուլային կոմիտե ընտրի, վերջինս՝ գործադուլը վերջանալուց հետո, կարող է գործարկոմի վերափոխվել։ Վերջապես, գործարկոմը կարող է դասակարգային արհմիութենական կազմակերպության արտադրական բազան դառնալ։

II. ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՅՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ, ՎՈՐՏԵՂ ԱՐՀՇԱՐԺՈՒՄԸ ԼԵԳԱԼ ՉԷ

Անլեգալ կոմկուսակցությունները պետք է աշխատեն մասսայական բանվորական լեգալ կազմակերպություններում

Մեզ թվում է, թե այս խնդրի սահմանը պետք է վորոշել։ Այն յերկրներում, վորտեղ կոմկուսակցությունները անլեգալ դրության մեջն են գտնվում, սակայն՝ վորտեղ միաժամանակ կան լեգալ լայն կազմակերպություններ, նպատակահարմար չէ նրանց զուգահեռ կարմիր բանվորա-

կան անլեգալ միութիւններ կազմել, վորովհետև ավելի հեշտ և արդյունավետ կընթանա կոմկուսակցութիւնների աշխատանքը լեգալ գոյութիւն ունեցող մասսայական կազմակերպութիւններում։ Բուլղարիայի և Ֆինլանդիայի արհմիութիւններում կատարված աշխատանքի փորձն ապացուցեց, վոր այս առարկութիւնը ճիշտ է։ Այս՝ իհարկե, չի նշանակում, թե անլեգալ կոմկուսակցութիւնները հարմար մոմենտին չպետք է զուգահեռ լեգալ արհմիութիւններ ստեղծեն, յեթե գոյութիւն ունեցող դեղին կամ ռեֆորմիստական արհմիութենական միութիւնները մասսայական չեն, կամ թե չպետք է իրենց լեգալ արհմիութիւններն ստեղծեն այն արտադրութիւնների մեջ, վորտեղ ընդհանրապես արհմիութենական կազմակերպութիւններ դեռ գոյութիւն չունեն։

Այն յերկրներում, վորտեղ դասակարգային բանվորական շարժումը լեգալ գոյություն ունենալ չի կարող, կոմկուսակցությունները պետք է ստեղծեն անլեգալ արհմիություններ

Այն յերկրներում, վորտեղ դասակարգային բանվորական կազմակերպութիւններ (այսինքն՝ թե կոմկուսակցութիւններ և թե արհմիութիւններ) լեգալ գոյութիւն ունենալ չեն կարող

(որինակ՝ Իտալիան), անհրաժեշտ է անլեգալ արհմիութիւններ ստեղծել։ Իտալիայի կոմկուսակցութիւնը անլեգալ արհմիութենական շարժման ղեկավարութիւնը չպետք է իր ձեռքիցը բաց թողնի, վորքան էլ աննշան լինի նա իր թվով, վորքան էլ վոր աննշան լինի նրա գործունեութիւնը։ Ընկեր Երկոլու յելուլթից կինգկ X պլենումում յերևում է, վոր Իտալիայում անլեգալ արհմիութիւնները փոքր են և նրանց գործունեութիւնը մեծ չէ։ Այդ արհմիութիւնները բանվորների ակտիվն է մտնում, վորը շատ մոտ է կանգնած Իտալիայի կոմկուսակցութեան։ (Մոռացութեան չպետք է տալ, վոր Իտալիայի կոմկուսակցութիւնն իր լեգալ գոյութեան ժամանակ 40—50 անդամ ուներ)։ Սակայն այդ հանգամանքը սկզբունքային տեսակետից դրութիւնը չի փոխում։ Իտալիայի այժմյան անլեգալ արհմիութիւնները խոշոր դեր են խաղալու, հենց վոր ֆաշիստական ռեժիմն ընկնի։

Անլեգալ արհմիությունները չեն կարող մասսայական լինել: Նրանք միացնում են միայն անկուսակցական ակտիվը, վորը համախմբվում է կոմունիստական կուսակցությունների շուրջը

Միաժամանակ չպետք է ցնորքներով տարվել, թե բանվորները մասսաներով կարող են անլե-

գալ արհմիութիւնները լցվել։ Գոնե մենք մի-ջազգային հեղափոխական արհշարժման պրակտի-կայից այդպիսի որինակներ չգիտենք։

Անլեգալ արհմիութիւններն են մտնում գլխա-վորապես կոմկուսակցութիւնը մոտիկ կանգնած տարրերը։ Այդ՝ ակտիվն է, վորի վրա յե հեն-վում կոմկուսակցութիւնը։ Բայց այս ակտիվին կոմկուսակցութիւնները պետք է ուրիշ հունով տանեն, վորպեսզի նա աշխատի այնտեղ, վոր-տեղ լայն մասսաներ կան։ Անլեգալ կոմկուսակ-ցութիւնները պետք է ձգտեն՝ ինչ ել վոր լինի, պահպանել գոյութիւն ունեցող լեգալ և կիսա-լեգալ լայն արհմիութիւնները և միայն այնտեղ, վորտեղ բացարձակապես անհնարին է նուազնիսկ կիսալեգալ վիճակով գոյութիւն ունենալ,—պետք է անցնեն անլեգալ դրութիւն։ Սակայն, կոմու-նիստական կուսակցութիւնը պետք է աշխատի գաղտնի պահել այնպիսի յերկրներում, ինչպես՝ որինակ, Ռումինիան է, միայն գլուխը, միայն ղեկավարութիւնը, իսկ արհմիութենական կազ-մակերպութիւնը պետք է գոյութիւն ունենա հայտնապես։ Կարևորն այն է, վոր արհկազմա-կերպութիւնները գոյություն ունենան: Թող ցրեն նրանց, թող դուրս քշեն շենքերից, գրավեն գուլքը, այնուամենայնիվ նրանք պետք է ձգտեն պահպանել իրենց գոյութիւնը լեգալ կամ կիսա-լեգալ ձևով։

Լեգալ հեղափոխական արհմիությունները պետք է պայքարեն նրանց ընդհատակյան ֆելու կառավարության փորձերի դեմ

Անլեգալ արհմիություններին վերաբերյալ խնդիրը սերտ կապված է անլեգալ կոմկուսակցությունների պրոբլեմի հետ։ Մենք մի շարք կոմկուսակցություններ ունենք, որոնք որոշ մասսայական լեգալ հնարավորություններ ունեն։ Սրա առընչությամբ ուղիղ գիծն աղավաղելու յերկու տեսակ տենդենց է առաջ գալիս. մի կողմից՝ խիստ գաղտնի գործող կամ արտասահմանում գտնվող կուսակցական ղեկավարությունը վարող կոմունիստները, որոնք մասսայական բացահայտ կազմակերպություններում են աշխատում, չափազանց վախից կարող են ոպորտունիստական սխալներ գործել. մյուս կողմից՝ բացահայտ մասսայական կազմակերպություններում աշխատող կոմունիստներից վոմանք իսկապես կարող են խզվել կուսակցական ղեկավարության բայշևիկական գծից։

Այն դժվարությունները, որոնք առաջ են գալիս լեգալ բանվորական շարժումը ղեկավարելիս. յերբ կոմկուսակցություններն անլեգալ են

Վերջին ժամանակներս՝ որինակ, ռուս-ֆիննական արհմիությունների համաձայնության ռա-

ռիֆիկացիայի խոշորագույն խնդրում, վորը կընք-
ված եր Անգլո-Ռուսական Կոմիտեյի խզումից
հետո և վորն այն ժամանակ միջազգային մեծ
նշանակություն ուներ, անջատում տեղի ունե-
ցավ Ֆինլանդիայի կոմկուսակցության ղեկավա-
րության և այն կոմունիստների միջև, վորոնք
աշխատում եյին յերկրի ներսում։ Ֆինլանդիայի
կոմկուսակցության ԿԿ արհմիություններում աշ-
խատող կոմունիստներին դիրեկտիվներ տվեց
ռատիֆիկացիայի յենթարկել այդ համաձայնու-
թյունը համագումարում։ Սակայն կոմունիստնե-
րը, վորոնց հետևում եյին հսկայական թվով
պատգամավորներ (սոցիալ-դեմոկրատները հա-
մագումարում ունեյին ձայների միայն 23%-ը),
թեև համագումարում համաձայնությունը հաս-
տատելու մասին սկզբունքային վորոշումն հաջո-
ղեցրին, սակայն այն պատրվակով՝ թե սոցիալ-
դեմոկրատները ճեղք կառաջացնեն արհմիու-
թյունների մեջ, յեթե այդ համաձայնությունը
համագումարն անհապաղ ռատիֆիկացիայի յեն-
թարկի, համաձայնեցին համաձայնությունը կեն-
սագործելու խնդրի վերջնական վորոշումը արհ-
միությունների Կենտրոնական Վարչության հա-
յեցողությանը հանձնել, վորն իսկապես նշանա-
կում ե փաստորեն հրաժարվել այդ համաձայ-
նությունը կատարելուց։ Այժմ Ֆինլանդիայի կո-

մունիստական կուսակցության առաջ խնդիր է դրված ազատվել կուսակցության այն աջ և տատանվող անդամներից, որոնք արհմիություններում են աշխատում և խուսափել մասսաներից մեկուսանալուց, որը կարող է տեղի ունենալ, եթե Ֆինլանդիայի կոմկուսակցությանը չհաջողվի ֆիննական արհշարժումն իր ազդեցության տակը պահել։

Աջերն առանձին կազմակերպություններ են ձևավորում այն յերկրներում, որոնց մեջ կոմկուսակցությունների գոյությունը լեգալ չե

Աջ տարրերը բոլոր յերկրներում առանձին կազմակերպություններ են ձևավորում, իսկ հաշտվողականները մինչև այժմ պարզ և վորոշ կերպով չեն ասել, թե ում հետ են գնում իրենք — կուսակցությա՞ն, թե՞ աջերի հետ։ Յեթե մենք հեշտությամբ ենք կարողանում բացարձակ և յեռանդուն պայքար մղել աջերի և հաշտվողականների դեմ լեգալ կոմկուսակցություններում, անլեգալ կոմկուսակցություններում այդ պայքարն ավելի դժվար է։ Ուստի, անլեգալ կոմկուսակցություններն առանց սպասելու, վոր աջերն առանձին կազմակերպությունների ձևավորումն ստանան, պետք է ամեն միջոց ձեռք առնեն, վորպեսզի աջերի և հաշտվողականների դեմ ան-

խնա պալքար մղելով և մասսայական լեղալ կազմակերպություններում աշխատող տատանվող կոմունիստներին կուսակցության տոկուն անդամներով փոխարինելու ճանապարհով չկտրվեն լայն պրոլետարական շարժումից։

III. ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՅԵՎ ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ (ՌԵՎԵՐՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ)

Այս խնդիրն այժմ գործնական մեծ նշանակություն ունի մի շարք յերկրների համար։ Նա միայն հարևանցիորեն դրվեց ԿԻԳԿ X պլենումում և տնտեսական պալքարում կոմկուսակցության խնդիրներին վերաբերյալ թեզիսներում իր լուծումը չգտավ զանազան յերկրներում գոյություն ունեցող բազմազան պայմանների պատճառով։ Սակայն այդ խնդիրն ամենաարագ պարզաբանության ե կարոտ։ Ֆաբրիկանտների այն մեթոդը, վորով պահանջում ելին իրենց ձեռնարկությունը մտնել ցանկացող բանվորներից, թե ստորագրություն պետք ե տաք, վոր պարտավորվում եք հեղափոխական արհմիությունները, կոմկուսակցության մեջը չմտնել, կամ հեղափոխական պրոպագանդա չմղել, ընդորինակել են ռեֆորմիստական պրոֆբյուրոկրատները։ Նը-

բանք ստորագրություն են պահանջում այն անձերից, վորոնք արհմիություններում ընտրովի պաշտոն ունեն, գլխավորապես՝ իհարկե, հեղափոխական բանվորներից, վոր նրանք կկատարեն արհմիությունների վորոշումները, վոր նրանք կոմկուսակցությունների դիրեկտիվները արհմիություններում չեն անցկացնի և այլն։

Կոմունիստները կարո՞ղ են գրավոր պարտավորություն հանձն առնել, թե պրոպագանդա չեն անի

Մի շարք կոմկուսակցությունների մեջ այդ հարցը՝ թե կոմունիստները կարող են այդպիսի պարտավորություններ ստորագրել թե վոչ, գործնականորեն ճիշտ չի լուծված։ Անգլիայում դեպքեր են յեղել, յերբ կոմունիստ բանվորները հրաժարվել են ֆաբրիկանտին ստորագրություն տալուց, վորի հետևանքով նրանք դուրս ելին թռչում ամենախոշոր գործարանից, իսկ մի քանի դեպքերում կոմունիստներն ստորագրություն ելին տալիս, թե պրոպագանդա չեն անի և իրոք դադարեցնում ելին հեղափոխական աշխատանքը։ Աջերն ու հաշտվողականները չափազանց պարզ կերպով են լուծում այդ հարցը, պահանջելով կուսակցության անդամներից ստորագրել այն

բոլոր և ամեն տեսակի վերջնագրերը, որ կներկայացնի նրանց արհմիութենական բյուրոկրատիան, ուրիշ խոսքով ասած՝ նրանք կոմկուսակցությունից պահանջում են սպորտունիստական պասիվ դիրք բռնել սոցիալ-ֆաշիստական արհմիության ապարատի լիրբ և հետզհետե ուժեղացող հարձակման հանդեպ։

Կոմունիստները ոչ մի պարտավորություն չեն կարող հանձն առնել բուրժուազիայի յեվ նրա լկտիացած ռեֆորմիստների առաջ

Մյուս կողմից, մեր շարքերում կան նաև այնպիսի ընկերներ (առանձին ձայներ լսվում եյին նաև ԿԻԳԿ X պլենումում), որոնք «սկզբունքորեն» դեմ են, որ կոմունիստները որևե պարտավորություն ստորագրեն։ Գերմանական կոմկուսակցության մեջն ել կան մի քանի ընկերներ, որոնք ճիշտ դիրքերում են կանգնած, բայց որոնց մեջ տենդենց կա հրաժարվել ստորագրություն տալուց, յերբ պրոֆբյուրոկրատները պահանջում են կոմունիստներից մի թղթի կտոր, որ ուղղված է կոմկուսակցության և հեղափոխական արհշարժման դեմ, որովհետև՝ ասում են, որ այդ բանը վարկաբեկ կանի կոմունիստական կուսակցությանը։ Ով որ ուսումնասի-

րել և լենինիզմի տակտիկան և ուսել բայշևիկորեն մանևրել, նրա համար դժվար չի լինի պատասխանել նաև ռևվերսների հարցին։ Ռևվերսներն ստորագրելու հարցը սկզբունքային հարց չե։ Այդ՝ տակտիկայի հարց է։ Եթե՝ որինակ, գոմինդանյան արհմիությունների ղեկավարներն այս ձևով հարց դնելին, թե ամեն վոք, ով իր թեկնածությունն է դնում արհմիության վարչություն մտնելու համար, պետք է մի թղթի կտոր ստորագրի, թե ինքը կոմունիստ չե, այդ դեպքում Չինաստանի կոմունիստական կուսակցության անդամները կարող են համաձայնել այդ բանին։ Կարող են, լեթե Չինաստանի կոմկուսակցությունը վճռել և գրավել այդ արհմիությունները։ Կոմունիստները բուժուազիայի հանդեպ վոչ մի պարտավորություն չունեն և չեն կարող ունենալ։ Իսկ ռեֆորմիստական, դեղին, գոմինդանյան, կաթոլիկական և նման արհմիությունները լոկ բուրժուազիայի վրադիրներն են հանդիսանում։ Եթե ռևվերսներն ստորագրելու հարցը Գերմանիայում դնենք, կարող է գերմանական կոմկուսակցությունը իսկույն լուծել այդ միակերպ բոլոր քաղաքների և արհմիությունների համար այն իմաստով, թե չի կարելի պահանջվող ստորագրությունը ռեֆորմիստներին տալ։ Վորևե արհմիության մեջ հեղա-

փոխական ոպոզիցիա դրավելու նպատակով ավելի աջող աշխատանք տանելու համար, այն կոմունիստները, որոնք ռեֆորմիստներին անծանոթ են, որպես կոմունիստներ, կարող են ստորագրել նրանց պահանջած ռեվերսները։ Սակայն, այդ չի նշանակում, թե նրանք պետք և դադարեցնեն կոմունիստական աշխատանքը միայն նրա համար, որ այդպիսի ստորագրություն են տրվել։ «Մենք թաղցրինք ճշմարտությունը բուրժուազիայից, — կասեն կոմունիստները բանվորներին, — միայն նրա համար, որ հնարավորություն ունենանք ձեզ ճշմարտությունն ասելու ռեֆորմիստների դավաճանական դերի մասին»։ Բանվորներն այդպիսի կոմունիստներին կհասկանան։ Սակայն, եթե կոմունիստները հայտնի չեն, — ասենք, չեթե Բերլինի կուսակցամակերպությունն առաջարկեր ընկեր Պիկին ընտրել որևե արհմիութենական համագումար ուղարկելու և դրա համար պահանջվեր, որ նա հրաժարվեր կոմկուսակցությունից, — այդտեղ՝ իհարկե, անհնարին է ռեվերս ստորագրել։ Որովհետև թե բանվորներին և թե ռեֆորմիստներին հայտնի չե, որ ընկ. Պիկը Գերմանիայի կոմկուսակցության անդամ է և նա ավելի ոգուտ կբերի հեղափոխական արհմիութենական և բանվորական շարժմանը նրանով, որ ասի, թե ինքը կոմունիստ է և վոչ մի ստորագրություն չի տա իր կուսակցության դեմ։

Այդպես պետք է դնել հարցը ռեվերանների ստորագրության մասին։ Կոմկուսակցությունն այդ հարցը պետք է վճռի այն բանի կապակցությամբ, թե ռեվերանների ստորագրումը, կամ այդ ստորագրությունից հրաժարվելը՝ թե մեկ և թե մյուս դեպքում, կընդարձակի՞, կամրապնդի՞ կոմկուսակցության ազդեցությունը բանվոր դասակարգի վրա։ Այդ բանը սկզբունքային խնդիր չէ մեզ համար։ Մենք՝ կոմունիստներս բանվոր դասակարգի հանդեպ հարյուր տոկոսով պետք է ազնիվ լինենք, իսկ բուժուազիայի և նրա դաշնակիցների հանդեպ վոչ մի պարտավորություն հանձն չենք առնում։

IV. ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Արդյոք հնարավոր է ռեֆորմիստական արհմիութենական ապարատի նվաճումը, թե՞ վոչ։ Կիդկ X պլենումի թեզիսները՝ կոմկուսակցության տնտեսական կուրսերի և տակտիկայի մասին, այդ հարցին միանգամայն պարզ պատասխան են տալիս։ «Վնասակար և ոպորտունիստական ցնորք կլիներ կարծել, թե մենք ներկա պայմաններում կարող ենք տիրել ռեֆորմիստական արհմիութենական ապարատին — չեթե նույնիսկ մեզ հետ լինի անդամակցական արհմիու-

թենական առկա մասամբ։ Սակայն այդ լերբեք չի նշանակում, թե կոմունիստները և հեղափոխական ոպոզիցիան պետք է պասիվ դիրք բռնեն արհմիութենական գեկավարության ընտրություններում։ Ընդհակառակն։ Պայքարն արհմիությունների բոլոր բյուրոկրատներին և կապիտալիստների ագենտներին դուրս քշելու համար, պայքարը արհմիությունների ամեն մի ընտրական պաշտոնի համար, մանավանդ պայքարը ռատրին արհլիագորների համար, հզոր զենք պետք է դառնա մեր ձեռքում—սոցիալ-ֆաշիստական արհբյուրոկրատիայի դերը մերկացնելու և նրա դեմ պայքարելու համար»։ Հետևաբար, մենք պետք է ձգտենք տիրել արհմիություններին՝ արհմիութենական մասամբերին ճվաճելու միջոցով։

Կարո՞ղ են արդյոք կոմունիստները ճվաճել արհմիութենական ապարատը կապիտալիստական յերկրներում յեվ կարո՞ղ են նրանք հրաժարվել պայքարից ռեֆորմիստական արհմիությունների ամեն մի ընտրական պաշտոնի համար

Սակայն ընկերներից վոմանք հարցը բոլորովին ուրիշ կերպ են դնում. մենք ընդհանրապես չենք կարող վորևե ռեֆորմիստական ապարատ նվաճել, ֆաբրիկաներից և գործարաններից սկը-

ած։ Խնդիրն այդպես դնելը ճիշտ չէ։ Կա կենտրոնական ապարատ, կա և ֆաբրիկաների և գործարանների ապարատ։ Մենք կենտրոնական ապարատը նվաճել չենք կարող։ Դեռ ել ավելի՝ մենք չենք կարողանա նվաճել արհմիութենական միությունների ապարատները կամ առանձին միությունների ապարատները փոքրիշատե նշանակալից մասշտաբով։ Եթե մենք նրանց նվաճել կարողանայինք, ռեֆորմիստներն իսկույն ճեղք կբանային նրանց մեջ։ Այս մասին այժմ արդեն վիճելու հարկ ել չկա։ Այդ վեճին արդեն վաղուց վերջ է տվել Պրոֆինտերնի IV կոնգրեսը։ Իսկ եթե մենք հարցն ուրիշ կերպ դնենք, որինակ՝ կարելի՞ է Գերմանիայում պայքար մղել արհմիութենական ատորին ապարատի համար՝ ֆաբրիկաներում ու գործարաններում, արհլիազորությունների և նույնիսկ արհմիությունների տեղական բաժանմունքների համար (Գերմանիայի կոմկուսակցությունը արհմիությունների մի ամբողջ շարք տեղական բաժանմունքներում մեծամասնություն է կազմում), այդ հարցին մենք պետք է դրական պատասխան տանք։ Շատերը հարց են տալիս. «ինչ արդյունք կստացվի»։ Արդյունքը այն կլինի, որ եթե կոմկուսակցությունը նվաճի արհլիազորների ինստիտուտը և արհմիությունների բաժանմունքները, այդ դեպքում

ռեֆորմիստներն այդ ընտրությունները՝ իրենց չինովնիկներին նշանակելու կարգով, կբեկանեն։ Բանվորները կընտրեն իրենց հավատարմատար ընկերներին, իսկ ռեֆորմիստները կփոխեն այդ ընտրությունները։ Բայց այդ բանի շնորհիվ կոմկուսակցությունը հնարավորություն կունենա լավագույն իլյուսարացիա դնել բանվորների առաջ, թե ռեֆորմիստական արհմիութենական ապարատը դեմոկրատական կազմակերպությունից վեր և ածվել ոլիգարխիայի։ Այդ հնարավորությունը մենք յերբեք և վոչ մի պայմանում չպետք և բաց թողնենք։

V ՊԱՅՔԱՐԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ ՅԵՎ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

Խոշոր կապիտալիստական յերկրներում բանվորների տոկոսը կազմակերպված արհմիություններում շատ ցածր է

Խոշոր կապիտալիստական յերկրներում բանվորների տոկոսը կազմակերպված արհմիություններում շատ ցածր է։ Մինչդեռ արհմիությունները պայմանագրեր են կնքում ձեռնարկությունների հետ, վորոնք պարտադիր են ձեռնարկության բոլոր բանվորների և բանվորուհիների համար։

Ռեֆորմիստները գործադուլների մասնակցող անկազմակերպ բանվորների ժառանգից չեն դարձնում պայքարը դադարեցնելու խնդրի լուծմանը յուր հրանց նյութականապես չեն ոգնում

Լոկաուտների և գործադուլների ժամանակ Գերմանիայի, Անգլիայի, Չեխիայի, Ամերիկայի և մյուս յերկրների արհմիությունների անդամները իրենց արհեստակցական միությունների շաբաթական բավարար դրամական ոգնություն են ստանում, մինչդեռ անկազմակերպ բանվորներին, վորոնք կազմակերպվածների հետ միասին գործադուլ են անում, արհմիությունները դրամական ոգնություն չեն անում։ Ել ավելի. գործադուլը դադարեցնելու խնդիրը գործադուլին մասնակցած վոչ բոլոր բանվորներն են վճռում, այլ՝ խնդիրը վճռվում և արհմիությունների անդամների ժողովներում և մեծ մասամբ նույնիսկ պատվիրակների ժողովներում։

Ռեֆորմիստները գործնականորեն իրագործում են «խաղաղություն արդյունաբերության վեջ» յեվ հրանց կամքին հակառակ սկսված գործադուլները վերջանում են հարկադրական իրավարարությամբ

Բայց ամենից ավելի վատն այն է, վոր բոլոր յերկրների ռեֆորմիստական արհմիությունները

գործնականորեն իրագործում են «խաղաղություն արդյունաբերության մեջ», հետևաբար՝ իրենք անտեսական գործադուլներ չեն տանում, թեպետ և կապիտալիստական ռացիոնալացման հետևանքով բանվոր դասակարգի դրությունը սաստիկ վատացավ։ Կապիտալիստական ռացիոնալացումը պրոլետարիատի կազմի մեջ կառուցվածքային փոփոխություններ մացրեց։ Ֆաբրիկաներում և գործարաններում գերակշռում են անուս և անվարակ բանվորները, որոնց թվում կանայք և յերիտասարդներ։ Նրանք տնտեսական կոնֆլիկտներում շարժիչ ուժ են հանդիսանում։ Նրանք կամ ստիպում են արհբյուրոկրատներին գործադուլ հայտարարել, կամ բանթող են անում առանց արհմիությունների հավանության — սանկցիայի (յերկու դեպքում էլ ռեֆորմիստական արհբյուրոկրատները դատապարտում են այդ գործադուլները կառավարական հարկադրական իրավարարության — արբիտրաժի միջոցով, ընդամենն՝ իրավարարները սոցիալ-դեմոկրատներն են հանդիսանում, այսինքն՝ անդամներն այն կուսակցության, որոնց շարքում են գտնվում ռեֆորմիստական բյուրոկրատները)։

Թե ինչպես պետք է միավորել անկազմակերպներին։ Կոմունիստներ ռեֆորմիստների գլուխների վրայով պետք է մղեն բանվոր դասակարգի տնտեսական կռիվները

Ուստի, կապիտալիստական յերկրներում կոմունիստների առաջ ծառանում է հետևյալ անհետաձգելի խնդիրը—ռեֆորմիստների գլուխների վրայով կազմակերպել և ինքնուրույնաբար ղեկավարել տնտեսական կռիվները։ Դրա համար նրանք ֆաբրիկաներում և գործարաններում ընտրություններ կատարելու միջոցով նախքան գործադուլը պետք է ստեղծեն պայքարի նախապատրաստական կոմիտեներ (այդ կոմիտեները պետք է գործադուլի համար տարվող ագիտացիան ղեկավարեն, կարևոր նյութեր հավաքեն իրենց արտադրության մեջ տիրող դրության մասին, պահանջներ մշակեն ձեռնարկատերերին ներկայացնելու համար և այլն), պայքարի կոմիտեներ, յերբ գործադուլն արդեն հայտարարված է (գործադուլը հայտարարելուց առաջ գործադուլի պայքարի նախապատրաստության կոմիտեները պետք է հաշիվ տան իրենց ընտրող բանվորներին և առաջարկեն գործադուլի կոմիտե ընտրել, վորի խնդիրը գործադուլի թե կազմակերպվածների և թե անկազմակերպների ղեկավարությունն է հանդիսանում արդեն—պիկետներ նշանակել, կարի-

բավոր գործադուլավորներին ոգնել—ձեռնարկատերերի հետ բանակցություններ վարելը և այլն), պայքարի հետևանքների կոմիտեներ (պայքարը վերջացնելուց հետո՝ գործադուլային կոմիտեները պետք է հաշիվ տան իրենց ընտրող բանվորներին իրենց կատարած աշխատանքների մասին և առաջարկեն պայքարի հետևանքների կոմիտեներ ընտրել, վորի գործն է լինելու պայքարում տուժածներին ոգնություն հասցնել, արձակված բանվորների վերընդունելության համար ագիտացիա տանել, ձերբակալվածներին ոգնել և այլն)։

Կոմունիստները պետք է նախաձեռնություն ստանձնեն, վոր ձեռնարկությունների բանվորները պայքարի նախապատրաստական կոմիտեներ. պայքարի կոմիտեներ յեվ պայքարի հետևանքների կոմիտեներ ընտրեն, վորոնք պետք է միացնեն յեվ ղեկավարեն թե արհմիությունների անդամներին յեվ թե այն բանվորներին, վորոնք արհմիությունից դուրս են գտնվում

Ընդհանուր ժողովներում պայքարի կոմիտեների ընտրությունը շարժմանը կներգրավի բոլոր բանվորներին—թե արհմիությունների անդամներին և թե անկազմակերպ պրոլետարիատին։ Պայքարից առաջ, պայքարի ժամանակ և պայքարից հետո անկազմակերպ բանվորները ընտրված կոմիտեների ղեկավարությանն են յենթարկվելու;

այդ նշանակում է թե՝ տարբերվելով ռեֆորմիստներից, նրանք ակտիվ կերպով կմասնակցեն գործադուլային պայքարին։

Ինքնաստինքյան հասկանալի է, որ անկազմակերպ բանվորներից լավագույն և ամենաակտիվ տարրերին, որոնք պայքարին մասնակցել են, անհրաժեշտ է կոմկուսակցության, արհմիությունների մեջն առնել՝ հեղափոխական ոգորդիցիան ուժեղացնելու համար ռեֆորմիստական արհմիություններում, ներգրավել կարմիր արհմիությունները, որտեղ կան այդպիսիները, ճակատային ոգամարդկանց և կանանց կարմիր միությունները կամ ինքնապաշպանության ջոկատները, Մոսքվի անդամության, սպորտային միությունները, Մեժրաբպոմի անդամության և այլն։

Ֆաբգործարկոմներ՝ որոնց ընտրում են ձեռնարկությունների բոլոր բանվորներն ու բանվորուհիները, պետք է դեկավարեն, շարժման մեջ քաշեն անկազմակերպ բանվորներին։ Կոմունիստները պետք է պայքար մղեն ռեֆորմիստների դեմ՝ ֆաբգործարկոմներում ազդեցություն ձեռք բերելու համար։

Միևնույն ժամանակ՝ չերբ պայքարի չեն պատրաստվում, անկազմակերպ բանվորները կարող են և պետք է հեղափոխական ֆաբգործարկոմների

ղեկավարության տակ լինեն, վորոնց ընտրում են ֆաբրիկաների և գործարանների բոլոր բանվորները այն յերկրներում, վորտեղ ֆաբգործարկումներ գոյություն ունեն։ Ուստի, կոմունիստները պետք և կատաղի պայքար մղեն ռեֆորմիստների դեմ ֆաբկոմներում ազդեցություն ձեռք բերելու համար։ Հեղափոխական ֆաբկոմներին ոգնելու, մասսաների հետ լավագույն կապ հաստատելու համար՝ պետք և ստեղծել հեղափոխական լիազորների ինստիտուտներ, վորոնց պետք և ընտրել ֆաբրիկաների, արհեստանոցների և գործարանների բոլոր ցեխերում և բաժանմունքներում։ Իհարկե, վորպեսզի հեղափոխական ֆաբկոմներն ու հեղափոխական լիազորները կարողանան անկազմակերպ լայն մասսաների կազմակերպիչների և ղեկավարների դերը կատարել, անհրաժեշտ և, վոր նրանք իրենց գործունեության լեգալ շրջանակներից դուրս գան, վորոնց մեջ դրել են նրանց կապիտալիստական յերկրների օրենքները։

Այն յերկրներում, վորտեղ ֆաբգործարկումներ գոյություն չունեն, անհրաժեշտ է ստեղծել նրանց

Այն յերկրներում, վորտեղ ֆաբգործարկումներ գոյություն չունեն (Անգլիա, Ֆրանսիա), ան-

հրաժեշտ է ստեղծել նրանց և վորքան հնարավոր է շուտ ստեղծել։

Աջ հաշտվողականները Կոմինտերնի յեվ Պրոֆինտերնի նոր գծին դեմ են արհմիութենական աշխատանքում

Ինքնուրույն գործադուլային պայքար մղելու, անկազմակերպներին միացնելու և պայքարի կոմիտեներ ստեղծելու հարցերը կիրկ X պլենումում տարաձայնություններ չհարուցին։ Աջերն ու հաշտվողականները, վորոնք մամուլում և ժողովներում Կոմինտերնի և Պրոֆինտերնի նոր տակտիկայի կիրարկման դեմ ելին արտահայտվում, պլենումում ներկայացուցիչ չունեցին։ Կարծիքների վորոշ նրբություններ առաջ յեկան այն հարցի մասին, թե պայքարի կոմիտեները մշտական՝ թե ժամանակավոր որգաններ պետք է լինեն։

Պայքարի կոմիտեներն արդյոք մշտական, թե՞ ժամանակավոր որգաններ պետք է լինեն

Ֆրանսիական և իտալական ընկերներն այն կարծիքի ելին, թե պայքարի կոմիտեները պետք է մշտապես պահեն իրենց գոյությունը, անկախ այն հանգամանքից, թե պայքար մղվում է, թե՝ վոչ։ Կոմինտերնի և Պրոֆինտերնի վորոշումների

ուն 1919 – 1923 թվականների ժամանակաշրջանում իրար վոր հանձնարարվում եր կոմկուսակցություններին և կարմիր արհմիություններին ֆաբրիկաներում և գործարաններում գործողության կոմիտեներ ստեղծել։ Փորձը ցույց տվեց, վոր այդ կոմիտեները խոշոր դեր ելին խաղում միայն այն ժամանակ, յերբ պայքար ելին ղեկավարում։ Գործադուլը վերջանալուց հետո բանվորները նրանց գոյության մասին մոռանում ելին։ Նույնիսկ գործողության կոմիտեների անդամներն իրենք իսկ մոռանում ելին իրենց ֆունկցիաները։

Ուստի, իրենց ընտրող բանվորների վրա ազդեցությունը պահպանելու համար՝ պայքարի կոմիտեները պետք է դադարեցնեն իրենց գոյությունը, հենց վոր պայքարը վերջանա, վորի ղեկավարության համար ելին նրանք ընտրվել։ Միայն անհրաժեշտ է, վոր իրենց գոյությունը դադարեցնելուց առաջ անպատճառ հաշիվ տան իրենց ընտրողներին։

Այն յերկրներում, վորտեղ ֆաբգործարկոմներ գոյություն չունեն, պայքարի կոմիտեներ՝ հաղթական գործադուլներից հետո, պետք է ֆաբգործարկոմների վերածվեն ուրիշ ֆունկցիաներով, քան ունեյին պայքարի կոմիտեները

Ընկեր Երկոյին ԿԻԳԿ X պլենումում պայքարի կոմիտեների մշտական գոյության ոգտին այս-

պիսի պատճառ եր բերում, թե՝ հաղթական գործադուլից հետո նրանք պետք է պայմանագրեր կնքեն ձեռնարկատերերի հետ, ուստի պայքարի այդ կոմիտեները պետք է վերածվեն մշտական որգանների, վորպեսզի կարողանան վերահսկել այդ պայմանների կատարման վրա։

Իհարկե, այդպիսի դեպքեր հնարավոր են, մանավանդ այն յերկրներում, վորտեղ ֆաբգործարկոմներ չկան, կամ այն դեպքերում, յերբ ֆաբգործարկոմները ռեֆորմիստների հետևից են գնում (չի կարելի այդպիսի ֆաբգործարկոմներին վերահսկողություն վստահել այն պայմանների կատարման վրա, վորոնք ռեֆորմիստների կամքին հակառակ են կնքվել)։ Բայց այդ դեպքում պայքարի կոմիտեյի գործունեությունը բոլորովին ուրիշ բնույթ է ստանում։ Նրա ֆունկցիաներն ուրիշ են լինում, քան պայքարի նախապատրաստությունը կամ գործադուլի վարումը։ Այն յերկրներում, վորտեղ ֆաբգործարկոմներ գոյություն չունեն, պայքարի նման կոմիտեները ֆաբգործարկոմների յեն վերածվում։ Իսկ այն յերկրներում, վորտեղ ֆաբգործարկոմներ կան, պայքարի կոմիտեյի կնքած պայմանագրի կատարման վերահսկողությունն անցնում է ձեռնարկության մեջը գոյություն ունեցող ֆաբգործարկոմին, յեթե նա կոմունիստներից կամ հեղափո-

խական ոպոզիցիայի կողմնակիցներից և կազմված։ Իսկ յեթե ձեռնարկության ֆաբգործարկոմը ռեֆորմիզմի կողմնակիցն է, այդ դեպքում՝ պայքարի կոմիտեն, վորպես ձեռնարկության բանվորների վստահությունը վայելող որգան, փաստորեն կփոխարինի ռեֆորմիստական փաբգործարկոմին։

ԿԻԳԿ X պլենումը պայքարի կոմիտեներին ժամանակավոր բնույթ տալու ոգին է արտահայտվել

ԿԻԳԿ X պլենումը տնտեսական պայքարին և կոմունիստների խնդիրներին վերաբերյալ թեզիսներում մատնանշել է, թե պայքարի նախապատրաստության կոմիտեները, պայքարի կոմիտեները և պայքարի հետևանքների կոմիտեները պետք է ժամանակավոր որգաններ լինեն։

Կոմունիստները պետք է ձեռնարկություններում աշխատեն

Միջազգային արհմիութենական շարժման այս բոլոր հիվանդագին պրոբլեմները կարող են իրենց լուծումն ստանալ միայն այն պայմանով, վոր կոմունիստական և հեղափոխական արհմիութենական ավանգարդը անպայմանորեն և ակտիվո-

րեն թափանցի գործարաններն ու ձեռնարկությունները։ ԿԻԳԿ X պլենումի տնտեսական կռիվներին վերաբերյալ բանաձևում ասվում է, վոր ֆաբրիկաներում և գործարաններում պետք է հեղափոխական լիազորների ինստիտուտ ստեղծել, վորին վիճակված է քաղաքական խոշորագույն դերը խաղալ կոմունիստների ձեռքով գործարանների և ֆաբրիկաների բանվորներին գրավելու գործում, այսինքն՝ բանվոր դասակարգի մեծամասնությանը նրանց ձեռքով գրավելու գործում։ Իսկ յեթե մենք ձեռնարկություններում կուսբջիջներ չենք ունենա, կոմունիստները ֆաբգործարկոմներում ֆրակցիայով մեծացած չեն լինի, այդ դեպքում խոսք ել չի կարող լինել, թե կոմկուսակցությունները կկարողանան հեղափոխական լիազորների ընտրություն կատարել և նրանց ղեկավարել։ . . .

Կարմիր արհմիությունների բազան պետք է ձեռնարկություններ լինեն

Ուրեմն՝ առաջին հերթին, մենք պետք և ձգտենք, վոր կոմկուսակցությունները և կարմիր արհմիություններն անպայման անմիջական կապ ունենան ձեռնարկությունների հետ։ Խնդիրն անունը չե, այլ այն է, վոր մենք վորևե կեր-

պով և լեզանակով թափանցենք գործարաններն ու ֆաբրիկաները։

Լենինատանում, որինակ, ֆաբրիկային պատվիրակների ինստիտուտ գոյություն ունի։ Ֆաբրիկային այդ պատվիրակները միայն գործադուլների ժամանակը չէ, որ գոյություն ունեն և որոնց բոլոր բանվորներն են ընտրում։ Իհարկե, վոչ ամեն տեղ այդ բանը հեշտ կլինի։ Ֆրանսիայում՝ որինակ, մինչև այժմ չկարողացանք մենք համոզել ֆրանսիական ընկերներին, թե պետք է ձեռնարկություններում կարմիր արհմիությունների մեջ ստորին ապարատ կազմել և շատ դժվար է հուսալ, թե նրանք կկարողանան պատշաճ կերպով թափանցել ձեռնարկությունները և կազմակերպվել։ Մանավանդ վոր Ֆրանսիայի կոմկուսակցությունն ինքը դեռ իր բջիջները չունի մեծ գործարաններում։ Բայց անհրաժեշտ է այդ պրոբլեմն անհապաղ դնել և այն ել վոչ թե միայն Ֆրանսիայի համար, վորովհետև բանվոր դասակարգի մեծամասնությանը գրավելու ուղին ընկնում է նրան գործարանում անմիջապես գրավելու միջով։ Առանց հաստատուն բազա ունենալու ձեռնարկության մեջ՝ չի կարող իսկական հեղափոխական պայքար լինել կոմկուսակցությունների բայշևիկական գծի համար—ընդդեմ ոպորտունիզմի, պոչականության և սոցիալ-դեմոկրատական տրադիցիաների։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I Զինական արհշարժման հիմանդագին խնդիրները 3

II Կոմունիստների խնդիրներն այն յերկրներում, վորտեղ արհշարժումը լեգալ չի . . . 24

III Կոմունիստների պարտավորությունների մասին բուրժուազիայի և ռեֆորմիստների հանդեպ (ռեֆերանների մասին) 31

IV Ռեֆորմիստական արհմիութենական ապարատի նվաճումը 36

V Պայքարի կոմիտեները և անկազմակերպների միացումը 39

ՀՄՍՌ ԳԱՍՏՐՈՆՈՄԻԱՅԻ ԳՈՒՆԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ. Ա. Ս. Տ. Լ. Ր. Կ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045502

А 8497

О. Пятницкий

ПРОБЛЕМЫ МЕЖДУНАРОДНОГО ПРОФДВИЖЕНИЯ

Госиздат ССР Армении
Эривань, 1930 г.

ԳԻՆՆ Ե 8 ԿՈՊ. (1¾ Մ.) մատ.